Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

891. 99-192
2-22

35420

17-3
Ժ-46
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄՇԱԿ ԼՐԱԳՐԻ

Հրատարակութիւն «Կովկասեան գրավաճառանոցի» Զ. Գրիգորեանցի

ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ

# ԵՐԳԱՐԱՆ

## ԵՐԳԵՐ ԵՒ ՊԱՐ—ԵՐԳԵՐ

Ի ՀՐԱՀԱՆԳ ԵՒ Ի ՊԷՏՍ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԱՑ ՀԱՅՈՑ.

ԽՄԲԱԳՐԵՑ

ԵԶՆԻԿ ՔԱՀԱՆԱՅ ԵՐԶՆԿԵԱՆՑ

ՈՒՍՈՒՑԻՉ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԵՐՍԻՍԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ—ՀՈԳԵՒՈՐ
ԴՊՐԱՆՈՑԻ ՀԱՅՈՑ ՏՓՂԻՍԱՅ.

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.
ՌՅԻԹ—1880

ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

# ԵՐԳԱՐԱՆ

## ԵՐԳԵՐ ԵՒ ՊԱՐ—ԵՐԳԵՐ

Ի ՀՐԱՀԱՆԳ ԵՒ Ի ՊԷՏՍ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԱՑ ՀԱՅՈՑ։

ԽՄԲԱԳՐԵՑ

Ե. Զ.ՆԻԿ ՔԱՀԱՆԱՅ ԵՐԶՆԿԵԱՆՑ

ՈՒՍՈՒՑԻՉ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԵՐՍԻՍԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ—ՀՈԳԵՒՈՐ

ԴՊՐԱՆՈՑԻ ՀԱՅՈՑ ՏՓԽԻՍՈՅ։

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ։

ՌՅԻԹ—1880

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ Տ ԳԷՈՐԳԱՅ Դ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

6518-87

BF- 2008

35420

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Դ. ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ.

Ձերդ Ազգօգուտ գործերից մին է եւ Հայկական Ձայնագրութեան պաշտպանելու եւ ընդհանրացնելու փառաւոր գործը։

Ես ուսանելով այդ արհեստը Վեհափառութեանդ խնամոց ներքոյ, եւ այնուհետեւ հինգ տարի ծառայելով դորա տարածման եւ ծաղկման համար թէ Տփխիսի եւ թէ Նորա վիճակի մէջ,— աշխատասիրեցի այս փոքրիկ «Ձայնագրելու մանկական Երգարանը», որոյ կարօտութիւնը վաղուց արդէն զգալի է մեր ընտանեկան կրթութեան, մանաւանդ մեր ծխական հոգեւոր դպրոցների մէջ, եւ ի մխիթարութիւն սրտի Վեհափառութեանդ ատրաստելով, ամենախոնարհաբար նուիրումեմ, բարեհաճեցէք, Վեհափառ Տէ՛ր, ընդունել իմ այս դուզնաքեայ գործը։

ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆԴ

Ամենախոնարհ ծառայ եւ Որդի

ԵԶՆԻԿ ՔԱՀԱՆԱՅ ԵՐԶՆԿԵԱՆՑ.

# ՅԱՌԱՋԱԲԱՆ·

Շատ ժամանակ չէ, որ մեր տարրական դպրոցների մէջ մայրենի լեզուի ուսումն մանկավարժական գիտութեան շնորհիւ սկսուել է կանոնաւորուիլ, այն է՝ հին և միանգամայն անհասկանալի թէ եղանակով և թէ նիւթով հեգական գրագիտութեան փոխանակ մտնել նոր՝ հասկանալի նիւթով հնչական գրագիտութիւնը. այն ինչ երգեցողութիւնը որ կապուած է լեզուի ուսման հետ, մինչև ցարդ գտանվում է իւր հին և նախնական դրութեան մէջ: Հին և նախնական բառերը գործածելով, ես կամենում եմ՝ ասել, թէ ներկայումս մեր տարրական դպրոցների երգեցողութիւնը իւր դերի մէջ չէ. նա չէ կատարվում իւր բուն նշանակութեամբ, հետևապէս չէ տալի այն օգուտը, ինչ որ սպասվում է: Ուսուցանել անմատչելի լեզուով, անմարսելի նիւթով և բարդ եղանակով ազգային երգեր ու տաղեր, ահա՛ մեր տարրական դպրոցների երգեցողութեան համարեա՛ բոլոր ուսուցիչների գլխաւոր պարապմունքը. սորա մասին օրինակներ յառաջ բերել միանգամայն աւելորդ եմ համարում, միայն այս կասեմ, և ինձ հետ շատերը կհամաձայնին, որ աշակերտների մեծագոյն մասը շատ քիչ են համակրում երգեցողութեան դասերին և ոմանք փախչում են. և այս անհամակրութեան պատճառը կարելի է բացատրել նորանով, որ նիւթը և եղանակը չէ հետաքրքրում աշակերտներին, կամ աւելի լաւ ասել, բարձր է նոցա համար:

Երգեցողութիւնը, որ անհրաժեշտ է կրթութեան գործի մէջ, պէտք է ուսուցանուի ուսման բոլոր շրջաններում, և իւրաքանչիւրում նա իւր բուն նշանակութեամբ, մատչելի լեզուով, հասկանալի նիւթով և պարզ եղանակով, պէտք է համապատասխան լինի մանուկների հասկացողութեան, հասակին և ականջի, ճաշակի ու սրտի զգացմանց աստիճանաբար զարգացմանը. Ահա թէ ի՛նչ տեսակ երգեր է պահանջում մանկավարժութիւնը մեր ձայնագրագէտ ուսուցիչներից, որոց գործը կիսով չափ կթեթևացնէ մեր հայկական ձայնագրութիւնը, որ համարեա տարածուած է ամենայն տեղ և որը իւր պարզ կազմութեամբ և դիւրահասկանալի եղանակով մանկական ձայնագրութիւն կարելի է անուանել. Բայց ո՞րտեղ կարող ենք գտնել և ուսկի՞ց վեր առնել այդ տեսակ երգեր, որոնց մենք մանկական անուն ենք տալի: Եթէ ասենք, որ մեր մէջ չկան այդ տեսակ երգեր, կարծեմ ամենքը կհամաձայնուին ինձ հետ, որովհետև մեր բանաստեղծները այդ մասին դեռ ուշադրութիւն չեն դարձրել: Նոցա մեզ տուած երգերի մեծագոյն մասի նիւթը ազգ, հայրենիք, կամ նոցա հերոսների քաջագործութեանց նկարագրութիւնքն են: Թէև վերջին ժամանակները սկսել են երևան գալ բաւականին ժողովրդական երգեր, Նալբանդեանի, Գամառ-Քաթիպայի և այլոց աշխատասիրութեամբ, սակայն նոցանից մեծ մասի նիւթը և եղանակը բարձր են մանուկների համար. Օրօրոցի երգերը, որոնք մանկական երգարանի մէջ մեծ տեղ կարող էին ունենալ, դժբաղդաբար շատ քիչ կան մեզանում և մեր ձեռքը հասածների նիւթը, մանաւանդ եղանակը, շատ բարդ էին. այս պատճառաւ նոքա ընդունելութիւն չգտան մանկական երգարանի մէջ.

Այսպէս ուրեմն մեր ազգային երգեցողութիւնը, մանկական երգերի վերաբերութեամբ, գտանուելով աղքատ դրութեան մէջ, յառաջացնում է մեծ դժուարութիւն մանկական երգարան հրատարակել այն դիրքով և այն կատարելութեամբ, որպիսիք կան

Եւրոպայի լուսաւորեալ աշխարհներում, գլխաւորապէս Գերմանիայում։ Ուրեմն մնում է մեզ օգուտ քաղելով լուսաւորեալ ազգերի մանկական երգարաններից, վեր առնել նոցանից թարգմանութեամբ և նմանողութեամբ և մեր ազգի մէջ գտնուած մի քանի երգերի հետ կազմելով ի լոյս ընծայել և բաւականանալ, մինչև մեր միջից հեռաշխեա դուրս կգան ապագայում նոր բանաստեղծներ և կտան մեզ նոյն իսկ մեր կեանքից վերցրած մանկական երգեր։

Մի քանի խօսք էլ ասենք մանկական երգարանի կազմութեան մասին։

ա) Մանկական երգարանը իւր նիւթին նայելով բաժանվում է չորս մասերի. առաջին մասը պարունակում է իւր մէջ մանկական աղօթքներ։ Երկրորդ մասը — յառաջներ, տօներ։ Երրորդը — ձմեռնային երգեր և Չորրորդը ժողովրդական մի քանի գործածական երգեր։ Վերջին մասի ուսուցանումն՝ նայելով աշակերտների հասակին և զարգացման՝ կարող է ուսուցիչը յետաձգել։

բ) Երգերի մի մասը ժողովել եմ մեր երգարաններից, մինը — Տէր — Ղևոնդեանի մայրենի լեզուի առաջին և երկրորդ տարուց, մի մասը նմանողութեամբ թարգմանութիւն է Գերմանական, Գաղղիական և Ռուսական լեզուներից և մի փոքր մասն էլ իմ աշխատասիրութիւնիցն է։

գ) Երգերի մի քանիսի եղանակները իրանց բուն եղանակներն են, ի հարկէ այնպէս, ինչպէս հասել են մեր ձեռքը։ Մի քանիսինը — նմանողութեամբ ուրիշ եղանակներից յարմարացրած են, ոմանցը — ուրիշ երգերից փոխառնուած են մի քանի փոփոխութեամբ և մի քանասին էլ իմ յօրինած են։ Պէտք է ասել, որ մի քանի երգերի եղանակների նշւէջը հեշտութեան համար փոխուած են, սկզբնական ութնեակի վերածելով։ Այս

մասին կխնդրեմ երգերի ու եղանակների հեղինակների ներողամտութիւնը։

դ) Երգերի ուսուցանումն պէտք է լինի գիտակցաբար։ Ուսուցիչը ընտրում է որ և իցէ երգ, նորա միտքը հասկացնելուց և եղանակը համառօտ բացատրելուց յետոյ, այն է՝ որտեղ ձայնը բարձրանում է, որտեղ ցածանում, որտեղ հարկաւոր է մեղմ, ուժգին ևլն. ապա սկսում է ուսուցանել եղանակը կամ ձայնով և կամ որևիցէ նուագարանով։ Երգերի մեծ մասի վերջը գրած է ծանօթութիւններ թէ ի՞նչ ձևով, ի՞նչ կարգով, կամ ո՞րտեղ երգուին։ Այս մասին ես հրաւիրում եմ մեծապատիւ ուսուցիչների ուշադրութիւնը։

Վերջացնելով Մանկական երգարանիս փոքրիկ յառաջաբանը, մեծայոյս եմ, որ ընդունելութիւն կգտնի մեր աղքատ, մանաւանդ երգեցողութեան վերաբերութեամբ՝ գրականութեան մէջ, բայց թէ որքան է ինձ յաջողել հասանել իմ նպատակին, այդ թողնում եմ արդարադատ անձանց անկողմնասէր քննադատութեանն։

ԵԶՆԻԿ ՔԱՀԱՆԱՅ։

# ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ։

## ՄԱՂԹԱՆՔ

### ՕԳՈՍՏԱՓԱՌ ԿԱՅՍԵՐ ՀԱՄԱՐ։

4/4 —Միջակ·




## ՄԱՂԹԱՆՔ

### ՎԱՍՆ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։

3/4—Չափաւոր·



պա հեմ զա թոռ հայ րա պե տա կան,

եւ զգա հա կալ նո րուն զՏէր Գէ որգ

կե ցո՛ գոր ծովք իւ րովք փա ռա ւոր. կե ցո՛,

ով Տէր, կե ցո՛ զՏէր Գէ որգ Կա թո ղի կոս

ա մե նայն հա յոց:

## ԱՌԱՒՕՏԵԱՆ ԵՐԳԵՐ

### ՄԱՆԿԱԿԱՆ ԱՂՕԹՔ:

3/4—Ծանր.

Ո՛վ եր կըն քի երկ րի Տէր, դու բարի

մեր հայր. խըն դրու մենք քեզ մաղ թանք նե րըս

ընդու նի՛ր, եւ շնոր հի՛ր բա րի միտք, որ լաւ

ու սա նի՛նք եւ բա րի լի նի նք:

## ԲԱՐԻ ԱՌԱԻՕՏ.

3/4—[illegible]:

Խա ղաղ գի շեր մենք ա նց նե լով

Նոր օր կըր կին բա րեւ ենք, Դու

Տէր, որ մեզ միշտ պաշտպա նես եւ մեզ բա-

րիք տա լի ս ես, Քեզ օր հ նեն մե ր

բե րա ն ներ, Քեզ օ րհ նեն մե ր

ե ր գեր:

Քաղցր քընով ամրացըրիր
Մեր ոյժերը, Դու ո՜վ Տէր,
Կամենումենք այժմ գործ դնել
Մեր թարմացած մոքերը,
Լաւ ըմբռնել, ինչ որ լըսենք,
Միայն օրհնի՛ր մեր գործքը:

## ԱՌԱԻՕՏԵԱՆ ՈՂՋՈՅՆ.

4/4—[illegible]. զուարթ

Թարմ եւ ըը ուարթ արթ նանա լով ես պար տի-

գլէկ վա զե ցլ, գէ չե րը ա Նուշ քընե լով՚ես
յետ մը Նալ չու զե ցլ, ա Հաշըր ջան եմ
եսմըտՆում եւ յաջ ու ձախ ձեռ մեկ Նում, ողջոյն
ձեզ, ըն կերներ, դէՀ, Նո րո գենք մեր եր-

գեր ։

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ։

## ՅՈՒՍԱԶՆԵՐ—ՄԱՐՇԵՐ

(ՊԱՐ—ԵՐԳ)

$^2/_4$—Չէր·



Այսօր մենքշատ ուրախ ենք արեք ընկերք



մենքկար գով շրջա նաձեւ պարըռ նենք պար-երգ,



երգեր մենքեր գենք, հահա հա հահա հա



այսօր մենքշատ ուրախ ենք, հահա հա հահա հա



այսօր մենքշատ ուրախ ենք։

Կրօնի դասը պատմումենք,
Հայ—լեզուն վարժ կարդումենք,
Բերանացի Թելադրութիւն
Առանց սխալի գրումենք։ Հա հա, եւլն։
Փոքր Թուեր բերանացի
Դասատան մէջ հաշւումենք,
Իսկ մեծերը գրաւոր
Մեր տներում վճռումենք։ Հա, հա։

Նկարչութիւն սիրումենք,
Տետրերը մաքուր պահումենք,
Եւ ուսուցչի տուած դասը
Մեծ ջանքով նկարումենք։ Հա, հա, եւլն.

Երգերը մեծ եռանդով
Խմբովին ուսանումենք,
Եւ մեծ դասամիջոցին
Մենք ներդաշնակ երգումենք։ Հա եւլն։

Հերի՜ք է, բաւական է,
Որքան այսօր խաղացինք.
Դէ՜հ, դասատուն շուտ վազենք,
Եւ մեր դասերն պատրաստենք։ Հա, եւլն։

Ծանօթ. Աշակերտները խումբ
խումբ կանգնումեն
եւ շրջելով երգում։

## ՇԻՆԱԿԱՆԻ ԵՐԳ.

3/4—Չափաւոր.




ձորնու դաշտը փռուև ցաւ։

Ընկերներդ վաղ արտերը գընացին
Ցորեն, գարին գերանդիով հնձեցին.
Խուրձ կապեցին. բարդ բարդեցին դաշտումը,
Նստան հանգչիլ կաղնիների հովումը։
Ա՞յ, մարդ վերկաց սառը ջրով լուացուիր,
Գօտիդ կապէ, գերանդիդ առ, դաշտ հասի՛ր.
Քանի հով է հունձդ արա արտումըդ։
Հունձդ հնձէ, մի ծուլանար գործումըդ,
Հունձդ կապէ, բարդդ բարդէ, տուն արի՛,
Հանգստացիր երբ քո հունձդ կատարի,
Բեր գերանդիդ, կախէ պատին քո տանը,
Ես իրիկուան կ՚պատրաստեմ սեղանը։

Ծանօթ. Երգվումէ խմբովին
եւ կարգով շրջելով։

~~~~~~~~~~

ԱՔԱՂԱՂ

4/4 — Չափաւոր.


Դուխնձ աաա՛, աքա ղաղ, ոսկէ կատարիդ մա-


տաղ, կարմիր միրու քիդմա տա՛ղ, աաա՛, ինչես
~~~~~~~~~~

շուտզարթնում, ի՞նչի եսքար ձըրեր գում եւինձ
քընել չեսթող նում:

ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ

4/4—Մէջտէ.

Ամ բողջշա բաթ է որ մենքփակուածենք
գըպըրոցում, գի շերեւ ցե րեկը անխոնջ պարա-
պում: տրամ տամտիմ տամ տամտիմ տամ
տարարամ տարարամ տամ տամտիմ տամ տամտի
տամ:

Երկինքն է կապուտակ
Արեգակն է խիստ պայծառ,
Օդը մեղմ հեզաշունչ,
Դաշտերը գալար: տրամ եւլն:
Այսօրուայ կէսը մենք
Նուիրել ենք զբօսանքին,
Որ պատրաստուինք վաղուեան,
Քաղցր աշխատանքին տրամ եւլն:

Աշխատե՛նք քոյրե՛ր, որ
Մեր դասերը պատրաստենք,
Քննութեան ժամանակ
Վստահ դուրս ելնենք։ տրամ ելն։

## ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ.

$^2/_4$—Մէջ—է։



Արեւն իւր ու ժը կոր ցր րած ամ -



պե րի տակ ծած կուե ցաւ, սաստիկ քամին



ողջծա ռերի տերեւ ները վայրա ծաւ։

Շատ թռչուններ ու թիթեռներ
Անյայտացան դաշտերից,
Ծառը չունի կանաչ տերեւ,
Նա զրկվումէ իւր զարդից։
Երկնքումը ամպի քուլէքն
Անձրեւներ են պատրաստում,
Անտառը իւր տերեւներով,
Առուն տխուր քչքչում։
Ինչի՞ դաշտերի սողուններ,
Եւ վայրենի թռչուններ,
Շտապումեն իրանց համար
Մի ապահով տեղ գտնել։

## ԽՐԱՏ.

4/4—Զուարթ




Ո՛վ իւր դասը չըգիտէ,
Եւ կամ սովրել ծուլանայ,
Նորան ո՛չ խաղ կայ, ո՛չ կեր,
Այս է պատիժը նորա:

Դասատան մէջ աւելորդ
Խօսակցութիւն չ՚պէտքէ,
Ապա լաւ ուշադրութիւն,
Այս մեր ամենիս պարտքն է:

Ով որ հանդարտ եւ սիրով
Լըսէ իւր վարժապետին,
Նա կլինի մանաւանդ
Սիրելի եւ գովելի:

Մենք էլ կուզենք, որ լինինք,
Գովելի աշակերտներ,

Հապա, ուրեմն, եղբարք,
Նստե՛նք, կարդանք, մեր դասեր։

Ծանօթ. Խումբ խումբ կազմուած երգումեն ճեմելիս։

## ՅԱՌԱՋ.

$4/4$—Չափաւոր



կա նէ, առ նենք կանգ։

Ծանօթ. Խումբը թեւթեւի տուած երգումեն, երբ երգումեն «ագատ շարժենք թեւերս» թեւերը շարժումեն, եւ երբ երգումեն «առնենք կանգ» կանգնումեն։

## ՄԱՅԻՍ.

2/4—Զուարթ

Մայիս նոր օրըն բուռն եւ մեր հոգին վառվը-
ում, Թաղառ նըր գուրսվա գիր, ճակտից պսակհեւ-
սեր, չէկա բեւ էփայ լում, կանա չըգե-
տինծած կուլմ, Թաչնոց երգ, սրնգի ձայն, հեռուից
էլըս փում.

Ծանօթ. Շրջան են կազմում եւ երգում։

## ՄԱՅԻՍԻՆ

3/4 – Չափաւր․ — Մէջաւ



Երբմա յիսին եսանց նուժեմ անտա ռով գեղեց-



կագոյն թռչուն ներշատ եմ տես նում․ լալա լա



լա լա լա լալա լալա չալա լա ։

Ամէն մէկը ուրախութեամբ երգելով,
Աշխատում է տաք բուն շինել թփերում ։ լա։
Երբ անցնում եմ ես ծաղկապատ դաշտերով,
Շատ թիթեռներ ու բզեզներ եմ տեսնում։ լա․
Սեւ ու սպիտակ եւ հազար մի գոյներով։
Ծաղկից ծաղիկ թռչկոտումէն, ծըլվլում ։ լա լա։
Ա՜խ, շատ սիրուն, շատ գեղեցիկ է դաշտը,
Որի վերայ, ոչխար, տաւար, եւ այծեր։ լա լա։
Ամէն կողմից բառաչումէն ու մայում,
Եւ ինձ իրանց քաղցր ձայնով գրըաւում ։ լա լա։

Կրկնել․ Շրջելով երգումէն։

## ԹԱՅԼԱՓՈԽ

4/4—Չափաւոր



Մենք նոյն կար գով գաւ նու մենք, ե ւ



Նոյն քայլով գը նու մենք, լալա լա լալա



լա լալա լա լալա լա լալա լա լալա



լա լալա լա։

Մենք միշտ ուրախ երգումենք,
Եւ շատ սիրով խաղումենք։ լա լա եւլն։
Մենք մեզ մաքուր պահումենք,
Եւ միշտ միմեանց սիրումենք։ լա լա։
Մենք մեր ծնողաց պատւումենք,
Եւ ուսուցչաց յարգումենք։ լա լա։
Մենք դասատանը հանգիստ ենք։
Եւ դասերին ուշադիր ենք։ լա լա։ եւլն։

Ծանօթ. Խումբ խումբ կազմելով մանեն գալի քայլափոխով եւ երգումեն։

## ԱՌԱԻՕՏԵԱՆ ՀՐԱԻԷՐ

2/4—Չափաւոր



Շտապզարթ նենքտե ղիցել նենք լալա լա լալա



լա, արագ ոտքով դուրսվազենք լալա լալա լա,

չէկա ըեւը գլուխհա նած դուրսէ կանչում ամեն-

քիս։ լալա լալա լալա լա լալա լա լալա

լա լալա լալա լալա լա լալա լալա լա։

Ծանօթ. զոյգ զոյգ գնալով խմբովին երգումեն։

# ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

## ՇՐՋԱՆԱՁԵՒ ԵՐԳԵՐ

### ԹՈՒՉՆԻԿ

3/4—Չափաւոր



Թուչնիկն ա հա դէպլինձ գա լով ոտքիս վե-



րայ Նըստու մէ կոցում բըռ նած մինա մա-



կիկ հօրկյս ող ջոյն բերու մէ։

Սիրուն Թուչնիկ դարձի՛ր գնա,
Բարեւիս հետ տար մի պաչ,
Ես չեմ կարող քեզ ընկերել,
Դեռ դասս չէ վերջացրած։

Ծանօթ. Շրջան առած երգումեն, իսկ մէկը Թուղթ բերանում բռնած շրջանի մէջ մի փոքր շրջելուց յետոյ կանգնումէ մէկի մօտ եւ երբ երգումեն «Դարձի՛ր գնա», շրջանից նա դուրս է գնում եւ խաղը վերջանումէ։

## ՓՈՔՐԻԿ ՃՆԻԿ

3/4—Չափաւոր

Ինչսի բուն ե ս դուխմ ճը նիկ, քանի այդ-
պէս փոքրիկ ե ս, քեզհա մար ես միսկը-
բե րեմ, լաւկե րա կուր կուտացնեմ։

Երբ որ դուն էլ կըմեծանաս,
Շատ գեղեցիկ բոյ կառնես,
Ապա մեր տան հաւատարիմ
Դու պահապան կ՚լինես։

Ծանօթ. Շրջան են կազմում եւ երգում։

## ԹՌՉՆԻԿ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐ

### ՄԱՆՈՒԿՆԵՐ

4/4—Չափաւոր

Սի րուն թռչ նիկ բունէ ցար ցան ցից
չես ա զա տ ուիլ, ո չինչ բանով աշ-
խար հում, քեզ նից չենք բա ժա ն ուիլ։

4

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Խ.Հ. С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
2001
35420
6518-57 (1003 / 11355)

ԹՌՉՆԱԿ․

Ա՜խ, ձեր ընչին եմ պէտք ես,
Սիրելի մանուկներ,
Թողէ՛ք ինձ ազատ թռչեմ․
Բացէ՛ք ցանցխ դռներ։

ՄԱՆՈՒԿՆԵՐ․

Չէ, չէ, թռչնակ․ չենք թողնիլ,
Մեզ մօտ կըմնաս․
Մենք քեզ շաքրէ հաց կ՚տանք,
Կուտես, կուրախանաս։

ԹՌՉՆԱԿ․

Ա՜խ, շաքրէ հաց չեմ սիրում,
Քաղցրեղէն չեմ ուտում,
Թողէ՛ք, դաշտի մորեխներ,
Ճաքրից լաւ եմ հաշվում։

ՄԱՆՈՒԿՆԵՐ․

Այնտեղ, դաշտում ձմեռը
Գուցէ ցրտից սատակես,
Իսկ մեզ մօտ ոսկուց շինած
Վանդակի մէջ դու կ՚ապրես։

ԹՌՉՆԱԿ․

Օ՜, մի՛ վախէ՛ք, ձմեռը
Տաք կողմեր կը թռչեմ,
Իսկ բռնուած դրախտն էլ,
Ինձ բանտ կ՚համարեմ։

ՄԱՆՈՒԿՆԵՐ.

Թռչնակ, Թռչնակ, մենք ինչպէս
Քեզ կըգուրգուրէինք,
Չէինք Թողնիլ, որ տխրես,
Միշտ կ'ուրախացնէինք։

ԹՌՉՆԱԿ.

Հաւատումեմ, բայց ձեր սէրը
Ինձ միշտ կը վնասէր,
Որովհետեւ զօրանով,
Աչքս յաւիտեան կփակուէր։

ՄԱՆՈՒԿՆԵՐ.

Ճշմարիտ է, ո՛վ Թռչուն,
Գերութեան չես տանիլ,
Աստուած քեզ հետ, գէ՜հ, Թռիր,
Ազատ, ուրախ եղիր։

Նօտ. Երկու շրջան են կազմում, մինը փոքր, միւսը մեծ։ Փոքր շրջանը, որ լինումէ մեծ շրջանի մէջ, կատարումէ Թռչնիկի դերը, իսկ մեծ շրջանը մանուկների, ապա հերԹով երգումեն։

## ՏԱՐՈՒԱՑ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ.

4/4—Չափաւոր.



Մարտն տալիս է ձըն ծաղիկ ապրիլ կապոյտ մանու-



շակ, մայի սինքաց վուժէ վարդը սոխակ երգում



անու շակ։

Յունիսը մեզ խոտ է տալիս,
Իսկ յուլիսը առատ ցորէն,
Օգոստոսը տանձ ու խնձոր,
Եւ ուրիշ շատ հասուն մրգեր։
Սեպտեմբերը մեզ տալիս է,
Խաղողի բոլոր տեսակը,
Հոկտեմբերը կարմիր գինին,
Նոյեմբերը բողկն ու տակը։
Դեկտեմբերին ձիւն է գալիս,
Յունվարին ծածկում սար ու ձոր,
Փետրվարին սկսումէ
Փոփոխակի ցուրտ ու տաք օր։

Ծանօթ. Կազմուեն շրջան եւ պը-
տոյտ գալով երգումեն։

## ՄԱՅՐ ԵՒ ԳԱՌՆԻԿ (ՈՐԴԻ)

4/4 — Յորդոր·



«Ին չո՞ւ կու լաս, դու գառ նիկ:



—Խիստ ծեծ կե րայ ես մայ րիկ:



—Խիստ ծեծ կե րայ ես մայ րիկ::

«Ո՞վ ծեծեց քեզ, գառնիկ»:

—Մէկ ծեր չար, կախարդ կնիկ:—

«Ինչի՞ ծեծեց քեզ, գառնիկ»

—Ծառի տակն էի, իմ մայրիկ:—

«Ինչո՞վ ծեծեց քեզ, գառնիկ»:

—Մէկ մեծ փայտով, իմ մայրիկ:

«Ո՞րտեղդ զարկեց, քեզ գառնիկ»:

—Ոտիկներիս, իմ մայրիկ:—

«Ի՞նչպէս լացի՛ր, դու գառնիկ:»

—Մէ՜, մէ՜, մէ՜, մէ՜, իմ մայրիկ:—

Ծանօթ. Երկու շրջան, մէկը կա-
տարումէ՝ գառնիկի, իսկ
միւսը մօր՝ դերը:

---

## ՊՍԱԿՆԵՐ·

3/4 — Չափաւոր· Մէջակ·



Մէկ սիրա լի նինք եւ մէկ հո գի միու-

*Թիւ նը գեղն ցիկզարդ էկեան քի՛ լալա լա*

*լալա լա լալա լալա լալա լա։*

## ՎԱՐԴԷ ՊՍԱԿ

4/4 — *Չափաւոր· Միջակ·*

*Վարդ ծաղկին լինինք նը ման եւօ րինակ*

*հեզու թեան թողվար դըհան գըստա նայ մերմա-*

*տաղոր տիվն բայ։*

## ՇՈՒՇԱՆԷ ՊՍԱԿ.

5/3 — *Չափաւոր — Միջակ.*

O *րի նակ անմե ղու թեան դաշտի սիրուն*

*դուշու շան ենկզարդ եղիր մերսր տին, եկմի-*

*ացիր մերեր գին։*

## ՄԱՆՈՒՇԱԿԷ ՊՍԱԿ.

3/4 — Չափաւոր. Միջակ.


Ազ նիւ սի րուն մանու շակ համես տութեան

օրի նակ տուցմեզ ծաղիկ գեղե ցիկ քօքըն-

քոյշհոտ անու շիկ: լա լա.

## ԿԱՂՆԻ ՊՍԱԿ.

3/4 — Չափաւոր. — Միջակ.


Կա նաչ խո տը դաշտե րի մերսըր տինէ

սիրե լի թողճիւ ղըկաղ նիծա ու պսակ լինի

մերգըլ խին: լա լա.

## ԲՈՂՈՐԸ.

3/4 — Չափաւոր. — Միջակ.


Սի րուն կա նաչ պսա կին թողմի անանք

բարե կամք, մերյոյ սերը անբա ժան մընան



մեզնից յաւլի տեան ։

Ծանօթ. Կազմումեն հինգ խումբ, կանգնումեն հինգ անկիւնի ձեւով եւ ամէն մի խումբը կատարումէ մի պտակի երգը, իսկ վերջի տունը բոլորը միասին երգումեն։

ԳԻՒՂԱՑՈՒ ԵՐԳ.

2/2 — Զուգաւոր.



Գիւղա ցին ոնց էա Նում իւրար տու մը



բանե լիս արիւն քր տինք Թափե լիս երբոր



ցորէն էցա Նում, գիւղա ցին ոնց էա Նում։



աշճ այսպէս անու մէ երբցո բէնը ցանու մէ,



լալա լա լալա լա լալա լալա լալա լա,



լալա լալա լալա լա։

Գիւղացին ո՞նց է անում, իր արտումը բանելիս,
Սիրուն ցորէն հնձելիս, աշխատելով անդադրում.
Գիւղացին ո՞նց է անում։ Ահա այսպէս անումէ,
Երբ ցորէնը հնձումէ, լա լա լա, եւլն։
Գիւղացին ո՞նց է անում, երբ անհամար հասկերը,
Ծածկումեն արտերը, եւ իւր ցորէնն է կրում
Գիւղացին ո՞նց է անում, ահա՛ այսպէս անումէ,
Երբ ցորէնը ցանումէ. լա լա լա եւլն։
Գիւղացին ո՞նց է անում արտից յետ դառնալով,
Ամբարը լի ցորէնով, երբ իւր ցորէն է կալսում.
Գիւղացին ո՞նց է անում. Ահա՛ այսպէս անումէ,
Երբ ցորէնը կալսումէ, լա լա լա. եւլն։
Գիւղացին ո՞նց է անում. իր խրճիթը յետ գալիս,
Պարզ անկողին մտնելիս, բուք քամուց անհոգ լինում;
Գիւղացին ո՞նց է անում. Ահա՛ այսպէս քնումէ.
Խաղաղ սիրտը եւ ուրախ. լա լա լա եւլն։
Ապա անհոգ գիւղացին, յետ ծանր աշխատանքից,
Նոր ուժ նոր սիրտ է առնում, զբօսնում եւ երգում։

Ծանօթ. Երկու շրջան, մինը հարցնումէ «գիւղացին ո՞նց է անում» իսկ միւսը պատասխանումէ «այսպէս անումէ»։ լա լան միասին են երգում եւ այն պըտոյտ գալով։

## ԳԱՐՈՒՆ։

4/4 — Չափաւոր.



Ահա եկաւ մերգա րուն ուզար գարեց
Գոյնզգոյն ծաղկունք մեզբե րեց, սիրուն գարուն



դաշտե րուն,
մերգա րուն.

4/4 — Ծանր.



Գոյն գոյն ծաղիկ ներ գը նանք քաղե լու



Տէ րին փառք տալու։

Զմռան չորցած գետինը
Տեսէք ինչո՞վ է ծածկուած,
Կարմիր դեղին շուշանը
Զարս բոլորն են սփռած. գոյն գոյն եւլն։
Մի քայլ յառաջ մենք իսկոյն
Տեսնումենք վարդ գոյնըզգոյն,
Վարդի միջին սոխակներ,
Երգումեն միշտ անհամբեր. գոյն եւլն,
Վարդի թփեր կարգի կարգ,
Բնութիւնից բուսել են,
Իսկ նոցա մէջ բարդ ի բարդ
Մանուշակներ բուրումեն. գոյն գոյն եւլն.

Դանօր. Շրջան առած երգումեն, խսկ երբ երգումեն «գոյն գոյն ծաղիկներ», կանգնումեն։ Ապա նորից պըտըտում։

# ՄԱՆՈՒԿՆԵՐ ԵՒ ԹԻԹԵՌ

## ՄԱՆՈՒԿ։

4/4 — Չափաւոր.




## ԹԻԹԵՌ։

Միրուն կանանչ դաշտերում
Ես ապրումեմ համարձակ,
Ծաղկանց բուրմունքն անուշ
Իմ կերակուրս է միակ։
Բայց իմ կեանքս շատ կարճ է, ։։
Թող ուրեմն վայելեմ,

Բարի եկիր, ով մանուկ,
Խնայիր, ինձի ձեռք մի տուր։

Ծանօթ. Երկու շրջան, մինը կատարումէ մանուկի, իսկ միւսը Թիթեռի դերը։

## ՁԱԳՈՒԿ ԵՒ ԿԱՏՈՒ։

$^5/_4$ — Մ՝ջակ.

Մերձա գիւղը փոսում նստած քը նու մէ,
ախ, խեղճ ձագիկ հիւանդ եսդու որչես ուզում
կուտու տել. ձագնու տումէ ձագնու տումէ ձագն
ու տում։

Ձագիկ մերչար կատ ուկից զգու շա ցիրնաու-
նիսուր սուրճան կեր կարող էքեզ վընա սել։
ձագիկ Թռաւ ձագիկ Թռաւ ձագ Թռաւ։

Ծանօթ. Շրջան, մէկ երեխայ դուր-

որ իբրեւ կատու, միւսը շրջանի մէջ, իբրեւ ձագիկ. երբ երգումեն «ձագն ուտումէ» ներկայացնում է ձագիկը, իբր թէ ուտումէ, իսկ երբ երգումեն «ձագիկ թռաւ» դուրս է գնում շրջանից. երգելու ժամանակ կատուն շրջանի շուրջը պտտումէ, երբ ձագիկը փախչումէ, նա բռնումէ,

## ԵՐԱԺԻՇՏՆԵՐ։

2/4 — Չափաւոր։





ա՜յ, ա՜յ, ա՜յ, այսպէս մենք ա ծու մենք։

Կրկնել նորից եւ փոխանակ ասելու ջութակ, ասել, ա՜յ ձեզ տաւիղի պի — ի — ի — ի — պի — ի — ի եւլն։

Կրկնել եւ ասել, ա՜յ ձեզ սրինգ. տիւ լիւ լիւ լիւ եւլն։

Կրկնել եւ ասել, ա՜յ ձեզ դաշնամուր, տալա լա լա տալա. եւլն։

Կրկնել եւ ասել, ա՜յ ձեզ ծնծղայք, ծինծայ ծին. եւլն։

Կրկնել եւ ասել, ա՜յ ձեզ թմբուկ, բում բոմ. բոմ. եւլն։

Կրկնել եւ բոլոր ձեւերը միասին ասել, պի լի լի լի լի, պի — ի — ի — ի — ի, պիւ — լիւ — լիւ, տալա լա լա, ծինծայ ծին — ծին, բում — բոմ — բոմ — բոմ եւլն։

Ծանօթ. Երեխաները շրջան առած մեն են գալի, զօրօրինակ ասելիս կանգնումեն եւ ներկայացնումեն այն նուագարանը, որոյ վերայ խօսումեն, իսկ ա՜յ ա՜յ ասելիս ծափեն տալի հաւասար չափով։ Մէկ նուագարան վերջացնելից յետոյ, նորից սկսումեն սկզբից երգել եւ ուրիշ նուագարանի անունը տալ եւ վարուիլ, ինչպէս առաջինի համար է գրած։

## ՓՈՔՐԻԿ ՈՐԲԻԿՆԵՐԸ ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐԴԻՔՆ ԵՆ։

2/4 — Չափաւոր — Միջակ.



Փայլուն ա րեւ ը ար դէն մայր մը տա -



ւ, լու սինն էլ վա ղու ց գը նաց



Թագ կա ցաւ։

Փոքրիկ աստղերը ամպում ծածկուեցան,
Եւ ցուրտ ու խաւար գիշեր էր աշնան։
Ամէն մարդ գընաց, իրան տուն հասաւ,
Ամէն երեխայ մօր գիրկը մտաւ.
Միայն խեղճ որբը չունի հայր եւ մայր,
Չունի բարեկամ, ոչ քոյր ոչ եղբայր։
Անտէր մնացած Աստուծոյ կամքին,
Խեղճը քնած է փողոցի միջին։

## ԾԱՂԻԿՆԵՐԻ ԵՐԳ։

### ՎԱՐԴ

2/4—Չափաւոր։



Ինձ ա մեն քը կո չու մեն ծա ղիկ-



նե րի թա գու հի, որ ով հե տեւ ծա-



ղի կըս կար միր գոյն ու հոտ ու նի։

Թէեւ իմ կանաչ թուփը
Շատ մարդու ձեռք կ՚ը ծակէ․
Բայց այս անմեղ յանցանքը
Ամէն մարդ ինձ կներէ։

ՇՈՒՇԱՆ․

Իմ սպիտակ կոկոնում
Անուշ բուրմունքներ կան շատ,
Եւ ոսկէ նման փոշի
Մեղուներին բազմաշխատ։
Իմ ցօղունքս է նազուք,
Իմ գագաթս գեղեցիկ,
Տերեւներս ընդարձակ,
Եւ ինքս եմ խիստ հեզիկ։
Իմ հիւրասէր թերթերում
Մեղու, մրջիւն, թէ թիթեռ՚
Կարող են հանգիստ գտնել,
Իբրեւ ազնիւ ընծուներ։

ՑԱՓՐՈՒԹ․

Իմ թուփերս փարթամ չեն,
Ո՚չ ծաղիկս փառաւոր,
Բայց բուրմունքս կ՚լսեն
Ամէն մարդիկ հեռաւոր։
Այս պատճառով կարող էք՚
Ցափրութ գտնել ամեն տեղ,

Թէ փոքրիկ պարզ փունջերում,
Թէ պարտէզներում շքեղ:

Ծանօթ. կազմել երեք շրջան եւ
ամեն մի շրջանը կ՚կատա-
րէ մի մի ծաղկի դերը:

## ԽՄԲԻԿ (ՊԱՐ—ԵՐԳ)

2/4—Չափաւոր:




Ծանօթ. Զոյգ - զոյգ պարելով եր-
գումեն եւ շրջան են կազմում:

## ՈՒՐԱԽՈԹԻՒՆ (ՊԱՐ—ԵՐԳ):

2/4—Չափաւոր:






Դէհ, մենք էլ պար բռնենք՝
Ուրախութիւն անենք.
Թեւ թեւի տանք եւ երգելով շրջենք՝
Այսօր ուրախ լինենք։
Ուրախ ժամ վայելենք՝
Ուրախ ենք՝ զուարթ ենք այժմ մենք։
Փոքրիկ թռչնիկները
Են նուագածուները։
Մենք էլ ոտնունք՝ երգենք եւ պարենք՝
Խաղը շարունակենք։
Դեռ արեւ տեսնումենք։
Ո՜հ՝ ուրախ ենք՝ շատ զուարթ ենք մենք։

*Տանօք. Պարելով երգումեն եւ
շրջան կազմում։*

## ԼԱՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ։

4/4—Զափաւոր



Միփոք րիկ Հայ դպրո ցի մէջ ուսա-



նու մէ ին քըսան հո գի աշխա տա-



ւոր լաւա շա կերտ ներ։



Նոքա ամէն քը բարե սիրտէ ին,
իրանց ծնո ղաց միշտպատ վումէ ին,
իրանց դասե րը շատ լաւ պատրաս տում
ամէն առա ւօտ կանուխ վերկե նում



երես ները սառ ջրով լուա նում,
գլուխնե րըսանդ րում, մաքուր հագնո ւում,
եւ մի բաժակ թէյ հացի հետխը մում,
ապա պատրաստվում ուդպ րոցգը նում։



Մենքա մէնքսէլ աշխա տենք նոցա օրինակ
Մենքա մէնքսէլ աշխա տենք մերպարտ քերը



առ նել,
ճանա չել,



բայցով խրպարտքն չ'գի տէ գովե լուար ժանիչէ։

Ծանօթ. Շրջան, սկզբում երգումեն պտոյտ գալով, երբ երգումեն «Նոքա ամենքը» ևլն կանգնումեն. իսկ նորից պտտումեն երբ երգումեն «մենք ամենքս էլ աշխատենք . . . ևլն։

# ՄԱՍՆ ՉՈՐՈՐԴ

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԾԱԿԱՆ ԵՐԳԵՐ.

### ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ։

3/4—Չափաւոր




Մանկական լեզուիս Թոթովանք օրկար.
Հնչումես իմ մէջ դու միշտ անդադար։
Հրաշալի լեզու, գեղեցիկ լեզու
Այդ ինչպէս քաղցր հնչումես ինձ դու։
Կամիմ աւելի քաջ ծանօթանալ,
Քո ճոխ գանձերին, հոգւով հայանալ,
Ասեմ, թէ ահա կանչումէին ինձ.

Պապեր եւ Հայրեր խոր գերեզմանից։
Հնչի՛ր, դու հնչիր այժմ եւ յաւիտեան,
Մայրենի լեզու, բարբառ սիրեկան.
Արի՛, բարձրացի՛ր, հնուց թեան փոշուց,
Դու իմ Հայ լեզու, մոռացուած վաղուց.
Զգեցի՛ր նոր կեանք, սուրբ գրուածներով
Որ ամենայն սիրտ վառուի քո սիրով,
Ամէն տեղ փչումէ Աստուծոյ շունչը.
Սուրբ է, այո՛, միւս այլ ձեւն ու ոճը.
Բայց թէ աղօթել; գոհանալ պէտք էր,
Իմ սրտի սէրը յայտնել արժան էր,
Իմ երանական մտածմունքը,—
Ապա կխօսիմ իմ մօրս խօսքը։

## ԱՌ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ։

$^2/_4$—Չափաւոր




Դու որ նախ ինձ հնչեցի՛ր,
Նախ սիրոյ ա՜հ, հեշտ խօսքեր,
Այն նախ ըղձքեզ թոթովէիս,

Դեռ իմ մոքէն չէ ելեր.
Իմ մայրենի քաղցր լեզու,
Կեաց անսասան, կեաց յաւէտ,
Կեա՛ց միշտ լեզուդ Հայրական
Կեա՛ց ծաղկալից, ծաղկաւէտ։
Ի՞նչ դառն վիշտ է սրտիս,
Երբ օտար տեղ ու լեզու.
Բռնի իրեն գլխ կքաշէ,
Սրտէս արիւն կհեղու։
Ո՛հ, զայն օտարն ես սիրել
Բնաւ չեմ կարող ի սրտէ,
Ձէ՛, այն չէ՛, քաղցր իմ լեզու,
Որ սիրով գլխ կողջունէ։
Լեզու համակ սիրաշարժ,
Քանի՜ ճոխ, պերճ ու պայծառ,
Մինչ կհնչես դու քեզի
Սրտերն ամեն գողացար.
Հնչէ՛, հնչէ՛ յաւիտեան,
Վեհ դիւցազանց պերճ երգ դու,
Թոթուէ փոշիդ խոր մութէն,
Եւ երեւան պերճ երգ դու։
Յաւերժական սուրբ գրոց մէջ,
Կեա՛ց միշտ նորէն ու նորէն,
Կշռեալ անուշ քու տողերդ,
Թող ամեն սիրտ արծարծեն։
Շնորհք ունել Արարչէն,
Կամ պէտք ըլլայ աղօթել,

Շրթունքս սրտէ բորբոքված,
Կաղաչէ անարգել։

## ՎԱՅՐ ԸՆԿՆՈՂ ԱՍՏՂ.

4/4—Չափաւոր. զուարթ




Ասու մէն, որ ամենայն մարդ
Աստղիկ ունի երկնքումը,
Ճշմարիտ է, ասա՛, հայրիկ,
Իմը ո՞րտեղ է փայլում։
Այո՛, դստրիկ, այդ աստղերը
Ունին հաշիւ ու համար,
Եւ մեզանից իւրաքանչիւր

Մի աստղ ունի իւր համար։
Հայրի՛կ, տե՛ս, տես, աստղը թռաւ,
Յետքից պայծառ գիծ թողեց,
Աստղիկ ընկաւ երկնքից
Միւսանգամ այլ չերեւեց։
Ո՛հ, իմ զաւրի՛կ, հանգիստ կացի՛ր,
Դա մեծատան մի աստղ էր,
Որ իւր օրումն, իւր կեանքումը,
Խեղճ աղքատը չը գիտէր։
Աղքատները նորա դռնից
Գիշեր—ցերեկ հալածուած,
Մի մարդ չկար նորան ծանօթ,
Որ չլինէր վշտացած։
Հա՛յրիկ, տե՛ս, տե՛ս, աստղը թռաւ
Յետքից պայծառ գիծ թողեց,
Աստղիկն ընկաւ երկնքից,
Միւսանգամ այլ չերեւեց։ եւլն։

## ԾԻԾԵՌՆԱԿ.

3/4—Չափաւոր





*Թռչու մեսայդ պէսա բադ։*

*Ա՜խ, Թռիր ծիծեռնակ,*
*Ծնած տեղս Աշտարակ,*
*Անդ շինիր քո բունը*
*Հայրենի կտուրի տակ։*
*Անդ հեռու ալեւոր,*
*Հայր ունիմ սգաւոր,*
*Որ միակ իւր որդուն*
*Սպասումէ օրէ օր։*
*Երբ տեսնես դու նորան։*
*Ինձնից շատ բարեւ արա՛,*
*Ասա՛, Թող նստի լայ,*
*Իւր անբաղդ որդւոյ վերայ։*
*Դու պատմէ, թէ ինչպէս*
*Աստ անտէր ու խեղճ եմ ես,*
*Միշտ լալով ողբալով,*
*Կեանքս մաշուել եղելէ կէս։*
*Ինձ համար ցերեկը*
*Մութ է շրջում արեգը,*
*Գիշերը Թաց աչքիս*
*Քունը մօտ չի գալիս։*
*Ասիր, որ չքացուած,*
*Թառամեցայ միացած,*
*Ես ծաղիկ գեղեցիկ*
*Հայրենի հողից զրկուած։*

Դէ՜ հ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացի՛ր, թռի՛ր արագ,
Դէպի Հայոց երկիրը,
Ծնած տեղս Աշտարակ։

## ԱՆԻ ՔԱՂԱՔ.

⁴/₄—Չափաւոր.




Շատ ցաւերով կայրիմ տապիմ,
Զունիմ մէկ մարդ հաւատարիմ։
Որ խղճալոյս գայ մօտենայ,
Հէչ չի ըսէ, մի լա մի լա։
Ա՜յ, Հայ տղայ խղճա՛ ինձի,
Տե՛ս, թէ քո Անին ինչպէս է։
Հերի՛ք ես լամ դու չըգթաս,
Չէ քո Անի՛ն շատ ափսոս է։
Ա՜խ ու վախով օրերս անցաւ,
Լալէն աչքերս կուրացաւ։
Որբ մնալն ինձ վիճակեցաւ,
Բաղդս ընաւ գլս մոռացաւ։

Կորուցել եմ Թագաւորներ,
  Ծողվել եմ գլխիս քոռ—բուեր։
Որք միշտ կերգեն «Անին անցաւ,
  Անին անտէր աւերեցաւ»։
Անին եմ շատ մարդաբնակ,
  Մնացել եմ դառն աւերակ։
Իմ լացն իմ կոծն իմ աղաղակ,
  Անտէր որբերու նմանակ։
Երբեմն էի շատ աննման,
  Հայոց քաղաք արեւելեան։
Աւերելեմ հիմնայատակ,
  Նստեր կուլամ ես միայնակ։
Եկա՛ր, տեսա՛ր, դարձե՛ր կերթաս,
  Լալով կսե՛ս «բարեաւ մնաս»։
Աստուած սիրես չմոռանաս,
  Մասիս սարին երբ մօտենաս։
Ըսես իմ քաջ Արարատին,
  Նստեր կուլայ քո խեղճ Անին։
  Ըսէ։ Երբ աւետիս կտաս,
  Թէ իմ Անի հերիք է լաս։

---

### ԱՂՔԱՏ ԿԻՆ

$^2/_4$ — Չափաւոր.



Ցուրտը փըչեց ձմեռը սառ տիկձիւնը ծածկեց



գետի նը ամե նայնմարդ մըտաւ իւրտուն պաս



պարուիլ ցրտի ցը:

Ժամի դռնում դողդողալով
  Կանգնած էր մի աղքատ կին:
  Նորա հանդերձ պատառ պատառ,
  Ջունէր շապիկ իւր հագին:
Անհամարձակ նա իւր ձեռքը,
  Պարզումէր անցկացողին,
  «Ողորմութիւն արէք, պարոն,
  Անտուն անտէր աղքատին»:
Ձեզ, սիրելիք ասեմ ո՞վ էր,
  Այս խղճալի աղքատը,
Այն ցրտումը ոտաբոբիկ
  Կանգնած ժամի դռնումը:
Շատ ժամանակ դեռ չէր անցել,
  Որ նա փառքով ու պատուով,
  Մանէր գալի փողոցներում
  Իւր սեպհական կառքերով:
Այժմ վախով նա իւր ձեռքը,
  Պարզումէ անցկացողին,
  «Ողորմութիւն արէք, պարոն,
  Անտուն, անտէր աղքատին» ասըն:

## ՀՈՎԻԻ ԱՂՋԿԱՅ ԵՐԳ.

2/4—Չափաւոր




Իմ զարդս են՝ այն ծաղիկները,
Եւ հայելիս՝ պարզ վտակ,
Պատսպարան՝ անտառները,
Լապտերս՝ վառ արեգակ:
Անդամանդս՝ ժայռ քարերը,
Եւ թանգ ոսկիս՝ անթառամ,
Մետաքսենիս՝ կանաչները,
Փափուկ, մաքուր, պատուական:
Ես պարծենալ չեմ, կարող չեմ,
Որեւիցէ ուսումով,
Միայն քաղցր երգել գիտեմ,
Եւ կեանք վարել սուրբ սրտով:

## ԻՏԱԼԱՑԻ ԱՂՋԿԱՅ ԵՐԳ.

4/4 — Չափաւոր.



Մերհայ րե նիք թշուառ ան տէր մերթշ նա-



մուց ոտ նա կոխ իւրոր դի քը արդկան



չու մէ։ հանել իւր վրէժ, քէն ու ոխ։

Մեր հայրենիք շղթաներով,
Այսքան տարի կապկապած,
Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով,
Պիտի լինի ազատուած։
Ահա եղբայր քեզ մի դրօշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղայ,
Արտասունքով լուացի։
Նայիր նորան երեք գունով,
Նուիրական մեր նշան,
Թող փողփողի թշնամու դէմ,
Թող կործանուի Աւստրիան։
Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ — մեռնի
Բայց երանի որ իւր ազգի
Ազատութեան կզոհուի։ եւլն։

## ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՆՔԸ.

5/4— Տխուր.




Բայց Նորա միշտ յեղյեղուկ
Պղտոր ջրով եզերքին,
Դարիւ դարիւ խփելով
Փախչումէին լալագին։
Արաքս, ինչո՞ւ ձկանց հետ,
Պար չես բռնում մանկական,
Դու դեռ ծովը չը հասած,
Սգաւո՞ր ես ինձ նման։
Ինչո՞ւ արցունք ցայտումեն
Քո սէգ հպարտ աչերից,
Ինչո՞ւ արագ փախչումես
Այդ հարազատ ափերից։
Մի պղտորէր յատակըդ,
Հանդարտ հոսէ խայտալով,
Մանկութիւնը քո կարճ է,
Շուտ կը հասնես դէպի ծով։

Վարդի թփեր թաղ բուսնին
Քո հիւրընկալ ափի մօտ,
Սոխակները նոցա մէջ,
Երգեն մինչեւ առաւօտ։ եւլն։

## ԵՐԳ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ.

4/4 — Չափաւոր. — Մէջակ.



Ազնիւ ըն կեր մեռա նու մեմ, բայցհան գիստ եմ



եսհոգ ւով, իմ թըշ նա միքս եսօրհ նու -



մեմ օրհնու մեմ քեզ Աստու ծով։

Հեռանումեմ անգին ընկեր,
Զգնահատած ոչ ոքից,
Բայց հաւատեաւ անձնանուէր,
Ազգիս մշակ կհաշուիմ։
Ազնիւ ընկեր չմոռանաս.
Անդաւաճան ջերմ սիրով,
Ես սիրել եմ իմ հայրենիք
Գնա եւ դու նոյն շաւղով։
Խղճուտիւնը Հայոց ազգի,
Կարեկցաբար մտածիր,
Ոսկէ գրքոյկն Եղիշէի
Քաջ առաջնորդ քեզ ընտրիր։
Իմ մահրիմ մահս մօտ է,
Բայց հանգիստ եմ ես հոգւով,

Որովհետեւ խիղճս արդար է
Ճշմարտութեան ջատագով·

## ԿԻԼԻԿԻԱ·

6/8— Չափաւոր·




Տեսի դաշտերն Սուրիոյ
Լեռ. Լիբանան եւ իւր մայրեր,
Տեսի զերկիրն Իտալիոյ,
Վենետիկ եւ իւր կոնտօլներ։

Կղզի նման չիք մեր Կիպրեայ,
Եւ ոչմէկ վայր է արգարեւ, Ցանկամ եւլն։
Հասակ մը կայ մեր կենաց մէջ.
Ուր ամենայն իղձ կաւարտի
Հասակ մ՚որ իւր յետին ի տենչ
Յիշատակաց կը կարօտի,
Յորժամ քնարն իմ ցրտանայ,
Սիրոյն տալով վերջին բարեւ։ Ցանկամ։

ԱՂՕԹՔ ԵՐԵԿՈՅԵԱՆ.

3/4—Նուանը—Չափաւոր.



# ՅԱՒԵԼՈՒԱԾ

## ԳԱՄԱՌ—ՔԱՏԻՊԱՅԻ ՀԵՂԻՆԱԿԱԾ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐԻՑ.

### ՆՈՐ ՏԱՐԻ.

4/4—Չափաւոր։



Ա. Հա հա սաւ Նոր տա րի, հե տը բե րեց



Նոր բա րի— մա նըր տը ղոց ու բախ օր, բա-



րի զա ւակ հօրն ու մօր։

Մանր տղայք են ուրախ,
Ունին կաղին, կօզինախ,
Սալորի չոր, չամիչ, թուզ,
Փշատ, ունաբ ու ընկուզ։
Մանըր տըղայք՝ չի մոռնաք,
Աշխարհումս չէք մենակ
Ուրիշ շատ խեղճ—տըղայք կան,
Աղքատ եւ անօգնական։
Նոքա հայր ու մայր չունին,
Սեւ չոր հացի կարօտ են,
«Աղքատներին ողորմած
Եղէք» կասէ ձեզ Աստուած.

ՄԵՂՈՒ.

2/4—Չափաւոր։



Հա ծա գե ցաւ արե գա կը,



Հածաղկեցաւ մանի շակը մեղուն թողուցխուրփե-



Թակը սըգ սըգ ա լով սըգսը գա լոմ

Մեղուն թռաւ ծաղկէ ծաղիկ,
Մեղր առաւ քաղցր—անուշիկ,
Մոմը տարաւ Հոտոտ, լուսիկ
Պըզպըզալով—պըզպըզալով։
Անուշ մեղրը՝ մանր տղոց,
Դեղին մոմը՝ ամեն սրբոց.
Իսկ չարերին՝ կըճ ու խայթոց.
Կըսկըծալով—կըսկըծալով։

## ԳԱՌՆՈՒԿ.

4/4 — Չափաւոր.



Մի բուն ան մեղ դու գառնուկ, բուր դըդ սպի-



տակ ու փա փուկ, դաշտ վա զե լով ու ա-



րօտ, մօ րըդ քա շում ես կա րօտ։

Մի լար գառնուկ սիրեկան,
Փոքրիկ տղի դու նման,
Կու գայ մայրըդ, հետը շատ
Կը բերէ քեզ անուշ կաթ։

## ՎԱՐԺԱՏՈՒՆ

2/4 — Մէջակ.



«Մայ րիկ, ին չո՞ւ այս խեղ ճը ման է գա-




—Ո՛րդեակ՝ դա էլ քեզ նման
Մի օր տղայ էր փոքրիկ·
Բայց թողուցին անխընամ
Նորան մօտի վատ մարդիկ։
Զուղարկեցին վարժատուն,
Բարի խրատ չի տուին,
Մընաց խեղճը անուսում,
Ծոյլ ու անգործ բընաւին . . . .
«Մա՛յրիկ՝ չուզեմ ես նման
Լինել թըշուառ այդ մարդուն,
Այսուհետեւ պիտ երթամ
Ամէնայն օր վարժատուն։»

ԾԻԾԵՌՆԱԿ։

4/4 — Չափաւոր




Կռունկը թըռաւ, գնաց վերեւէն,
Սոխակն էլ փախաւ մեր պարտիզներէն,
Մէկ դու մնացիր ճնճղուկների հետ,
Սիրուն ծիծեռնիկ, գարնան կարապետ։

Պատուհանիս մօտ շինէ քու բոյնը,
Անուշ ճռուողով երգէ գարունը,
Ածա՜ ձու, հանէ գեղեցիկ ձագեր,
Մնա՜ մեր մօտը մինչի Սեպտեմբեր:

## ԳԱՐՈՒՆ (ՊԱՐ—ԵՐԳ).

2/4 — Չափաւոր.



կարօտ ենքտեսքիդ ան նըման գարուն շուտարի մե-



ղի բերծա ղիկսի բուն, բերպայ ծառարեւ բեր



մեզ տաքօ բերճըռուը ռող թռչուն բեր կա նանչ



սի բուն:

Բա՜ց մեր դռները, բաց մեր պատուհան
Թո՜ղ բացուին ծաղկին, վարդ, մեխակ, շուշան,
Փակուած սենեակէն, ելնինք ազատուինք,
Կանանչ դաշտ երթանք, խաղանք, գըլորուինք:

## ԱՔԼԱՐ.

3/4 — Չափաւոր.



Ինչո՞ւ աքլա րը կանգնած է բա կում



պինդպինդ կանչու մէ երկու կուրի կուն:

Յորդոր.



Էն դուր որ վա ղուց ա բեւն է ծա գել
Դեռ չէ վեր կա ցել ա ղօթ քը ա բել

Բայց ծոյլ ե րե խան քը նից չէ զար թել.
Դպ րո ցի դա սը դեռ չէ սո վո րել
Ձախփառուր.

Կանչու մէջք լարն երկու կուրի կուն
տըղա յոցպարտ քը միտերն էձը գուռ:

## ԱՇՈՒՆ

4/4—Ձախփառուր.

Ա շու նը ե կաւ թա փե ցաւ սաղ արթ
էլ մի փընտ րել դու մա նուշակ ու վարդ ընու-
թիւ նը տը խուր պար տէ զը տըր տում
ձը մեռ ուայ հոգմն է մար դո ցը սըր տում:

Երեխան փակուած մենակ սենեակում,
Պատուհանիցը պարտէզ է նայում.
Միտքը բերում է գարնան օրերը,
Մարգերի վերայ դուարթ խաղերը:
Մի տրտմիլ, տղայ, թող անցնի մարտը,
Նորից կը բացուին նարգիզն—ու վարդը,
Նորից սոխակը պիտի գայ հանդէս,
Նորից խաղալու դու կ'երթաս պարտէզ:

ԳՐԱԴԱՐԱՆ

Դուրս եկան մամուլի տակից և վաճառվում են Զ. Գրիգորեանի Կովկասեան գրավաճառանոցում:

1. Մանկական Երգարան, առանց ձայնագրութեան, հայ դպրոցների ստորին դասատանց համար գինն է 20 կոպ.

2. Մանկական ձայնագրեալ Երգարան, Երգեր և պարերգեր, հայ դպրոցների համար: Գինն է 40 կոպ.

3. Մամուլի տակէ դասագիրք հայկական ձայնագրութեան հայ դպրոցների համար:

4. Պատրաստվում է տպագրութեան համար ձայնագրեալ երգարան:

---

Ծանօթ. Մանկական ձայնագրեալ երգարանի տպագրութեան ժամանակ դրաշարի անգիտութեան պատճառաւ բաժանման չափերի մէջ տեղ տեղ սխալ տողադարձութիւններ է եղած. այս մասին դարձնում եմ պ.պ. ուսուցիչների ուշադրութիւնը

Գինն է 40 կոպ.

2р [illegible]

25

ՀՀ Ազգային գրադարան
NL0467442